դարձոյց զնոսա փութանակի յետս, ամապարել և փութալ հասանիլ 'ի Կոստանդինուպոլիս (յ9 Սեպտեմբերի)։

Նիստ Չորրորդ, ('ի 12 Օգոստոսի)։

Վերստին կոչեցան Հայք և Յոյնք յատեան Դատաւորաց։ ընթերցան զառաջին ատենագրութիւնս և զթերին լցին 'ի բանից Յունաց՝ զորս յառաջագոյն ոչ կամէին խոստովանիլ, և իբրեւ թէ երկոքին կողմանք հաճեցան խաղաղութեամբ իրաւախոհ լինել, սակայն հաճութիւնն Հայոց՝ էր ակամայ, զի առանց վաւերական գրոց մտեալ էին 'ի դատաստան, և զարձանագրութիւնս հրովարտակաց ոչ գտին։ գրեանքն Յունաց գրեցան յիլամին, իսկ Հայոցն ոչ։ զի բանիւ Յունաց հաստատեալ լինէին սեփհականութիւնք նոցին։ զորս կամէին՝ այո՛ ասէին, և զորս ոչ կամէին՝ մերժէին, այսպիսի եղանակաւ չահեցան Յոյնք զիրաւունս իւրեանց։ սակայն Տէրութիւնն զթացեալ 'ի վերայ Հայոց, ոչ կամեցաւ զրկել զնոսա իսպառ յԵրուսաղէմ։ զի տեղիքն Յունաց անուանեցան ժառանգութիւն, իսկ Հայոցն՝ հիւրանոց և պատահական, և պատուէր եղեւ այլոց չհերքել զՀայս 'ի տեղեաց անտի։ Եւ չինութիւն տաճարին Ս. Յարութեան յատկացաւ Յունաց միայն, որում թէպէտեւ ցաւէին Հայք 'ի ներքուստ՝ քաջ գիտելով զկորուստ իրաւանց ազգին, այլ չէր հնար շրջել զբանն յայլ եղանակ և Դատաւորք խոստացան 'ի հասանիլ հրովարտակացն՝ կրկին առնել քննութիւն, եւ այսպիսի եղանակաւ մեկնեցան անտի։ Իսկ 'ի 16 Օգոստոսի դարձեալ ելին յԱտեան, ուր ընթերցան 'ի լուր ամենեցուն զկատարեալ Իլամն, չլինել այնուհետեւ այլ եւս վէճ եւ խռովութիւն 'ի մէջ երկուց ազգաց յԵրուսաղէմ վասն տեղեաց։ հաճեցան ընդ այս Հայք և Յոյնք, և որպէս թէ հաշտեալ ընդ միմեանս գնացին իւրաքանչիւր 'ի տեղիս իւրեանց։ Իսկ Դատաւորք ձեռն արկեալ կնքեցին զպատրաստեալ Իլամն և մատուցին զայն առ Արքայ, և զկնի աւուրց ինչ եկ 'ի Դրանէ երկու հրովարտակ գրեալ 'ի թուին Հիճրէթի ١٢٢٤ և տուաւ մին Հայոց և միւսն Յունաց։ Նոքա արարին զայն Խաթթի Շէրիֆ և զարդարեցին Ծանր Նկարիւք, և ետուն արձանագրել 'ի Դամասկոս, 'ի